ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-6-2-Ա

ք. Երևան 29.06.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի հունիսի 29-ի նիստում քննարկեց 2016 թվականի հունիսի 15-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ Անատոլի Վասիլիի Գոնչարի (Ուկրաինա, 60022, Չեռնովիցկայա մարզ, Խոտինսկի շրջան, գ. Շիլիվցի, Միրա փող., տուն. 33) «Կափարիչ ապակե բանկայի դարձաձալման համար» արդյունաբերական նմուշի (No20150026) վկայագիր տալը ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Արդյունաբերական նմուշի վկայագիր տալը ամբողջությամբ մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտարկված արդյունաբերական նմուշը չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 22-րդ եւ 23-րդ հոդվածներով սահմանված պահպանունակության պայմաններին.

«Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի եւ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշի հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 41-րդ գլխի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն հայտնում ենք Ձեզ, որ տվյալ նմուշը ենթակա չի գրանցման, քանի որ այն չի համապատասխանում արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմաններից մեկին՝ նորությանը: Արդյունաբերական նմուշը նոր է, եթե չի հայտնաբերվել նույնական արդյունաբերական նմուշ, որը հանրամատչելի է դարձել մինչեւ պետական լիազոր մարմին հայտ ներկայացնելու թվականը, կամ եթե խնդրարկվում է առաջնություն, ապա՝ մինչեւ առաջնության թվականը, ընդ որում, արդյունաբերական նմուշները համարվում են նույնական, եթե դրանց բոլոր հատկանիշները համընկնում են կամ տարբերվում են ոչ էական մանրամասներով:

Տվյալ դեպքում ներկայացված «Կափարիչ ապակե բանկայի դարձածալման համար» արդյունաբերական նմուշի 2 տարբերակներն ենթակա չեն գրանցման, քանի որ Ձեր կողմից նշված էական հատկանիշների համախմբությունը կրկնում է շուկայում առկա («Խոզյայուշկա», «Եվրո կրիշկա») նույնատիպ կափարիչների էական հատկանիշների համախմբությունը՝ այն է արտաքին շրջանաձեւ լայն եւ տափակ նույնական զոլերը: Ինչ վերաբերում է կափարիչի պսակի ստորին եզրը դեպի ներս ոլորված ծալվածքին, ապա այն բնականոն օգտագործման ընթացքում պսակի եզրն ապահով է դարձնում եւ լավ է պահում ռետինե խցանման օղը, բայց տեսանելի չէ, քանի որ չի երեւում բանկայի վրա դնելիս եւ փակելիս: Կափարիչների կենտրոնական ելուստը, որը առկա է Ձեր կողմից ներկայացված եւ մեր կողմից նշված «Կափարիչ» արդյունաբերական նմուշներում (http://banochka.com.ua/p90160678-kryshk--zakatochnaya-tvist.html) եւ չկա «Խոզյայուշկա», «Եվրո կրիշկա» կափարիչների վրա, ունի տեխնիկական ֆունկցիա՝ դուրս փքվելը, եթե բանկան հերմետիկ փակված չէ, սակայն այդ ֆունկցիան ունեն բոլոր կափարիչները, անկախ նշված ելուստի առկայությունից, նշենք որ եթե բանկան հերմետիկ փակված չէ, ապա բոլոր կափարիչներն էլ դուրս են փքվում:
Տվյալ պարագայում փորձաքննությունը գտնում է, որ դիզայները հիմնվել է արդեն գոյություն ունեցող կապարիչների արտաքին ձեւերի վրա, որտեղ զոլերը կրկնվում են եւ Ձեր կողմից նշված տարբերություններն էական չեն նրանց ընկալման համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակիորեն բավարարելու, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և արդյունաբերական նմուշի հայտով գործավարությունը շարունակելու վերաբերյալ, քանի որ որոշումն ամբողջությամբ հիմնավորված չէ և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գրանցման պայմանները հաշվի չեն առնվել:

Բողոքարկողի ներկայացուցիչը նույնպես համաձայնվեց կոլեգիայի առաջարկի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Կափարիչ ապակե բանկայի դարձաձալման համար» արդյունաբերական նմուշի (No20150026) հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ